Տասներկուերորդ հաղորդում

Դառնալ Նոր Երուսաղեմը

Գրվածքների ընթերցում. Հյտ 3:12, 19:7, 21:2, 9-11, 22, 22:17

I. Մեր քրիստոնեական կյանքի և եկեղեցական կյանքի համար մեզ անհրաժեշտ է ունենալ Նոր Երուսաղեմի տեսությունը՝ Հյտ 21:9-11.

Ա. Նոր Երուսաղեմը իրար հետ որպես մեկ ամբողջություն միաձուլված, միախառնված և համակառուցված աստվածայնության ու մարդկայնության համադրություն է. բոլոր բաղադրիչներն ունեն նույն կյանքը, բնությունը և կազմությունը, ուստի և ընդհանրական անձ են՝ Հվի 14:20, 23, Հյտ 21:2-3, 9-23:

Բ. Նոր Երուսաղեմը Աստծու տնտեսության կենտրոնական տեսության և աստվածային հայտնության գագաթնակետի ավարտունությունն է՝ խխ. 2, 9-11.

1. Նոր Երուսաղեմը՝ Աստվածաշնչի վերջնական ավարտունությունը, ներառում է այն, որ Աստված դառնում է մարդ և մարդը դառնում է Աստված կյանքով և բնությամբ, բայց ոչ Աստվածությամբ՝ խ. 2, 3:12.
   - ա. Քրիստոսի մեջ Աստված մարդ դարձավ, որպեսզի մարդուն դարձնի Աստված Իր կյանքով ու բնությամբ, որպեսզի փրկագնող Աստված և փրկագնված մարդը միաձուլվեն, կազմվեն իրար հետ՝ որպես մեկ ամբողջություն՝ Նոր Երուսաղեմը՝ 21:3, 22:
   - բ. Ի վերջո եռամեկ, հավիտենական Աստված դառնում է Նոր Երուսաղեմը՝ ընդհանրականություն կազմելով մեզ բոլորիս հետ, և Աստծու օրգանական փրկության գործընթացի միջոցով մենք նույնպես դառնում ենք Նոր Երուսաղեմը՝ Հռմ 5:10, Հյտ 3:12:
2. Նոր Երուսաղեմն Աստծու ընտրված, փրկագնված, վերածնված, սրբացված, նորոգված, փոխակերպված, կերպարանակցված և փառավորված մարդկանց կազմությունն է, որոնք աստվածացվել են՝ Հվի 3:6, Եբր 2:11, Հռմ 12:2, 8:29-30.
   - ա. Այն, որ մենք աստվածացվում ենք, նշանակում է, որ մենք կազմվում ենք պատրաստված և ավարտունացած Եռամեկ Աստծով, որպեսզի դարձվենք Աստված կյանքով և բնությամբ՝ դառնալով Նրա ընդհանրական արտահայտությունը հավիտենապես՝ Հյտ 21:11:
   - բ. Հավատացյալների աստվածացումը գործընթաց է, որն ավարտունանալու է Նոր Երուսաղեմում. դա բարձրագույն ճշմարտությունն ու բարձրագույն ավետարանն է՝ Հռմ 1:1, 3-4, 5:10, Հյտ 21:2, 3:12:
3. Նոր Երուսաղեմն ընդհանրական Աստվածամարդն է՝ Աստծու մեծացումը, ընդարձակումն ու արտահայտությունը՝ ընդհանրական Աստված՝ Հռմ 8:29, Եբր 2:10-12, Հյտ 4:3, 21:10-11.

ա. Նոր Երուսաղեմն Իր համակառուցված մարդկանց հետ Եռամեկ Աստծու ընդարձակումն ու արտահայտություն է՝ խխ. 10-11:

բ. Նոր Երուսաղեմն Աստծու մեծացումն ու ընդարձակումն է, Աստծու արտահայտությունը հավիտենությունում, այսինքն՝ ընդհանրական Աստված՝ Ծնդ 1:1, Հվի 1:1, 14, Ա Կրթ 15:45բ, Հյտ 22:17:

II. Նոր Երուսաղեմը «[հարսն է՝ Գառան կինը].... սուրբ քաղաքը՝ Երուսաղեմը»՝ 21:9-10.

Ա. Հովհաննես առաքյալը տեսավ «սուրբ քաղաքը.... պատրաստված որպես մի հարս՝ իր ամուսնու համար զարդարված»՝ խ. 2.

1. Նոր Երուսաղեմը հարս է, ինչը ցույց է տալիս, որ այն ոչ թե նյութական քաղաք է, այլ ընդհանրական անձ՝ Քրիստոսի բավարարության համար:
2. Որպես հարսը՝ Գառան կինը, Նոր Երուսաղեմը Քրիստոսի հավիտենական զույգն է՝ 19:7:

Բ. Նոր Երուսաղեմն աստվածային սիրավեպի՝ տիեզերական զույգի, «սիրո մեջ հավիտենական զույգի» վերջնական ավարտունությունն է՝ 22:17.

1. Աստվածաշնչի թեման տիեզերական զույգի աստվածային սիրավեպն է. տղամարդը Աստված Ինքն է, իսկ կինը՝ Աստծու ընտրված ու փրկագնված մարդիկ՝ Եսյ 54:5, Երմ 2:2, 3:1, 14, 31:32, Օվս 2:7, 19, Հվի 3:29, Բ Կրթ 11:2, Հյտ 19:7:
2. Աստվածային սիրավեպը բանաստեղծական կերպով պատկերված է Երգ Երգոցում՝ 1:2, 8:14.
   ա. Փնտրողը գործընթաց է անցնում և արդյունքում դառնում է Սուլամիթան՝ Սողոմոնի կրկնօրինակն ու Նոր Երուսաղեմի նախապատկերը՝ 6:13, 4:
   բ. Նոր Երուսաղեմը կլինի ընդհանրական Սուլամիթան, որն իր մեջ կներառի Աստծու բոլոր ընտրված ու փրկագնված մարդկանց:
3. Քրիստոսի նշանադրումն ու ամուսնական կյանքը ընդգրկում են եկեղեցու դարաշրջանը, թագավորության դարաշրջանը և հավիտենական դարաշրջանը.
   ա. Եկեղեցու դարաշրջանում մենք նշանվում ենք Քրիստոսի հետ՝ Բ Կրթ 11:2:
   բ. Հարսանիքի օրը լինելու է հազարամյա թագավորության դարաշրջանը՝ Հյտ 19:7:
   գ. Ամուսնական կյանքը հավիտյան տևելու է Նոր Երուսաղեմում՝ 21:2, 9-10:
4. Նոր Երուսաղեմը լինելու է հարսը հազարամյայում՝ հազար տարիների ընթացքում, որ մեկ օրվա պես է (Բ Պտ 3:8), այնուհետև կինը՝ նոր երկնքում և նոր երկրում հավիտյան (Հյտ 21:2).
   ա. Հազարամյայում հարսը ներառելու է միայն հաղթող սրբերին՝ 3:12:

բ. Նոր երկնքում և նոր երկրում կինը ներառելու է Աստծու բոլոր փրկագնված և վերածնված որդիներին՝ 21:7:

Գ. Հյտ 22:17-ը ցույց է տալիս, որ Քրիստոսն ու Նոր Երուսաղեմը՝ որպես Նրա կինը, տիեզերական զույգ են լինելու հավիտյան.

1. Հոգին, ով պատրաստված Եռամեկ Աստծու հանրագումարն է, մեկ է դառնում հավատացյալների հետ, որոնք այժմ լիովին հասունացել են Նրա հարսը լինելու համար՝ հմմտ Եփս 4:13, 15-16:
2. Պատրաստված Եռամեկ Աստծու ավարտունությունն ու Աստծու ընտրված, փրկագնված, վերածնված և փոխակերպված մարդկանց ավարտունությունը դառնալու են մեկ ամբողջություն և լինելու են Եռամեկ Աստծուն հավիտյան արտահայտող տիեզերական զույգը:

Դ. Վերականգնված եկեղեցում հաղթողները Նոր Երուսաղեմն են լինելու հազարամյա թագավորության մեջ՝ Հյտ 3:7-8, 12:

III. Տեր Հիսուսը վերականգնված եկեղեցում հաղթողին դարձնելու է Աստծու, այսինքն՝ Իր իսկ Եռամեկ Աստծու տաճարում ներկառուցված սյուն՝ խ. 12ա, 21:22.

Ա. Հյտ 21:22-ում տեսնում ենք, որ Նոր Երուսաղեմում Եռամեկ Աստված Ինքն է լինելու տաճարը.

1. Այն, որ հաղթողը սյուն է լինելու տաճարում, նշանակում է, որ նա սյուն է լինելու Եռամեկ Աստծու մեջ՝ 3:12ա:
2. Դա ենթադրում է Եռամեկ Աստծու հետ միաձուլվելն ու Եռամեկ Աստծով կազմվելը՝ Եփս 3:16-17ա:

Բ. Տերը մեզ սյուներ է դարձնում՝ փոխակերպելով մեզ, այսինքն՝ դուրս մղելով մեր բնական տարրը և այն փոխարինելով Իր աստվածային տարրով՝ Հռմ 12:2, Բ Կրթ 3:18.

1. Հյտ 3:12-ում «դարձնելու» բառի իմաստը մեզ կազմությամբ ինչ-որ բան դարձնելն է, մեզ ստեղծագործական ճանապարհով կառուցելը:
2. Եկեղեցական կյանքում այսօր Տերը ցանկանում է մեզ կազմությամբ սյուներ դարձնել Աստծու տաճարում:

Գ. Վերականգնված եկեղեցում Տիրոջ աշխատանքն Իրեն մեր մեջ ներդնելն է՝ մեզ կազմությամբ սյուներ դարձնելով Աստծու տաճարում՝ Եփս 3:16-17ա, Հյտ 3:12ա:

IV. Տեր Հիսուսը վերականգնված եկեղեցում հաղթողի վրա գրելու է Իր Աստծու անունը, Աստծու քաղաքի անունը՝ Նոր Երուսաղեմի, և Իր նոր անունը՝ խ. 12բ.

Ա. Այն, որ Աստծու անունը, Նոր Երուսաղեմի անունը և Տիրոջ նոր անունը գրված են հաղթողի վրա, նշանակում է, որ հաղթողին տիրում են Աստված, Նոր Երուսաղեմն ու Տերը, որ Աստված Ինքը, Իր քաղաքը (Նոր Երուսաղեմը) և Տերն Ինքը նրան են պատկանում, և որ նա մեկ է Աստծու, Նոր Երուսաղեմի և Տիրոջ հետ:

Բ. Աստծու անունը մատնանշում է Իրեն՝ Աստծուն, Նոր Երուսաղեմի անունը մատնանշում է հենց քաղաքը, իսկ Տիրոջ անունը՝ Իրեն՝ Տիրոջը՝ խ. 12բ:

Գ. Այն, որ Աստծու անունը, Նոր Երուսաղեմի անունը և Տիրոջ անունը գրված են հաղթողի վրա, նշանակում է, որ հաղթողի մեջ են ներդրվել այն ամենը, ինչ Աստված է, Նոր Երուսաղեմի բնությունը և Տիրոջ անձը՝ Հվի 14:19-20, 23, Եփս 3:16-17:

Դ. Այն, որ Նոր Երուսաղեմը հիշատակվում է որպես հաղթողին տրվելիք մրցանակ, նշանակում է, որ այս խոստումը կատարվելու է հազարամյա թագավորության մեջ. Նոր Երուսաղեմը հազարամյա թագավորության մեջ մրցանակ է լինելու միայն հաղթողների համար՝ Հյտ 3:12բ:

© 2023 Living Stream Ministry